ՆԱԽԱԳԻԾ

«1+4» ԾՐԱԳՐՈՎ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄ. ՄԵԾ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐՈՎ ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

Հոկտեմբերի 29-ին սպառվում է Վրաստանի ազգային փոքրամասնությունների համար նախատեսված «1+4» ստաժավորման ծրագրի հայտերի ընդունման ժամկետը:

Վրաստանի Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով նախարարությունից հայտնում են, որ, 2018-ի աշնանային ընդունելության համար, 500 թափուր տեղ է սահմանված: Ծրագրի շրջանակներում, 1-ից մինչեւ 6 ամիս տեւողությամբ, պետական հաստատություններում փորձաշրջան կարող են անցնել բակալավրիատի 3-րդ եւ 4-րդ կուրսերի, մագիստրատուրայի ուսանողները եւ ընդհանրապես «1+4»-ով բուհն ավարտածները:

2017-ին հաստատված ծրագրի փորձնական փուլի շրջանակներում՝ 65 երիտասարդ է ստաժավորում անցել: Նախարարությունից տեղեկացնում են, որ ծրագիրը նպատակ ունի երկրի հանրային կյանքում ակտիվացնել էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ քաղաքացիների մասնակցությունը:

Ծրագրի մասնակից ուսանողները երկրի պետհաստատություններում ստաժավորման հնարավորությունը կարեւորում են նոր գիտելիքներ ու փորձ ձեռք բերելու առումով:

Նինոծմինդայից Անի էլոյանը «1+4» ծրագրով կրթություն է ստանում Թբիլիսիի Իլիայի համալսարանի բիզնեսի կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսում: Ստաժավորման ծրագրին ծանոթացել է PITA երիտասարդական կենտրոնի կազմակերպած տեղեկատվական հանդիպմանը: Ասում է՝ դիմելու է փորձաշրջանն էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունում (տուրիզմի բաժնում) անցնելու համար:

«Մեծ ակնկալիքներ ունեմ ծրագրից: Հույս ունեմ զարգացնել մասնագիտական գիտելիքներս, ստանալ պետական հաստատությունում աշխատելու փորձ, որպեսզի հետագայում պատրաստ լինեմ իրագործել սեփական ծրագրերս»,- «Ալիք մեդիայի» հետ զրույցում ասում է նա:

Ծնունդով Նինոծմինդայից Գայանե Նորսոմյանը նույնպես դիմել է ծրագրին: Դրական պատասխանի դեպքում՝ նա ստաժավորում կանցնի Թբիլիսիի քաղաքապետարանում: Քաղաքագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողը ծրագրին երկրորդ անգամ է դիմում: Առաջին անգամ փորձաշրջան է անցել մայրաքաղաքի սակրեբուլոյում (ավագանի):

«Հույս ունեմ, որ սպասելիքներս կիրականանան եւ, ծրագրին իմ մասնակցությունն ավարտելուց հետո, ստացած գիտելիքներս առաջիկա աշխատանքում կիրառելու հնարավորություն կունենամ»,- ասում է Գայանեն:

Հիշեցնենք՝ ստաժավորման գործընթացն անցնելու է մրցութային կարգով: Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող են այցելել Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով նախարարության կայքէջ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՄԻՔԱՅԵԼ ԱԽՏՅԱՆ - 80

ՆԱ ՈՒԶՈՒՄ ԷՐ ԱՇԽԱՐՀՆ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ ՏԵՍՆԵԼ

Վրաստանի հայ արդի գրականության ճանաչված դեմքերից մեկի՝ թբիլիսահայ պոետ, թարգմանիչ, Վրաստանի գրողների միության եւ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ Միքայել Ախտյանի ստեղծագործական կյանքում խաչաձեւվել են մասնագիտությամբ ինժեներ-տեխնոլոգը եւ հոգով բանաստեղծ մարդը:

Նրա գրական վաստակը՝ մեկ տասնյակից ավելի չափածո ժողովածուները, այս հետաքրքիր սինթեզի գեղարվեստական անդրադարձն են, կյանքի պրակտիկ դիտողականության ու նրա բանաստեղծական ընկալման յուրօրինակ դրսեւորումը: Միքայելը նաեւ մանկական ժողովածուների հեղինակ է: Բանաստեղծի կենդանության օրոք, 2009թ., Թբիլիսիում լույս է տեսել Միքայել Ախտյանի կյանքին եւ ստեղծագործությանը նվիրված՝ «Բանաստեղծի ժողովածուների հետքերով» մենագրությունը՝ թբիլիսցի գրականագետ, պրոֆեսոր Էմմա Ախտյանի հեղինակությամբ:

Նշենք, որ, իրեն ժամանակակից գրչակիցներից շատերի նման, Միքայել Ախտյանը եւս բանաստեղծական մկրտությունը ստացել է «Սովետական Վրաստանի» (այժմ՝ «Վրաստան») թերթի էջերում: Նրա բանաստեղծություններն առաջին անգամ տպագրվել են այս թերթում, ում հավատարիմ բարեկամն ու ջատագովը նա մնաց մինչեւ իր կյանքի վեջը:

Այս տարի լրացավ Միքայել Ախտյանի ծննդյան 80-ամյակը: Հոբելյանը նշվեց հոկտեմբերի 19-ին, Թբիլիսիի «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում՝ նախաձեռնությամբ «Հասարակական գիտահետազոտական կենտրոն Վրաստանում» կազմակերպության:

Երեկոյին ներկա էին բանաստեղծի գրչակիցները, ընթերցողները, թբիլիսահայ մտավորականության ներկայացուցիչներ: Այստեղ էր հոբելյարի ընտանիքը՝ կողակիցը, որդիները:

Հոբելյարի անցած ճանապարհին նվիրված «Հասարակական գիտահետազոտական կենտրոն Վրաստանում»կազմակերպության նախագահ էմմա Ախտյանի անդրադարձ խոսքում, ներկաներին քաջածանոթ Միքայել Ախտյան մարդը, քաղաքացին, ստեղծագործողը, ասես, նորովի բացահայտվեց: Նորովի ներկայացավ՝ Աշխարհն ավելի լավը տեսնելու երազանքով այրվող բանաստեղծի ստեղծագործական գունապնակը՝ հայ գրականությանը բնորոշ՝ Հայրենիք, Ծննդավայր, Բնություն, Անձնական քնարերգություն... մոտիվների սեփական երանգներով: Մասնավորապես, նշվեց նրա թարգմանական գործունեությունը՝ իրեն ժամանակակից վրաց գրական երեւելիների՝ Գենո Կալանդիայի (1939-2017թթ), Մուրման Լեբանիձեի (1922-2002թթ.), Դավիթ Մճեդլուրու(1947-2006թթ.) ստեղծագործությունների թարգմանությունը՝ իբրեւ գրական ավանդական կապերի շարունակական իրողություն:

2008-ին նա արժանացել է Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալի եւ՝ պարգեւատրվել Վրաստանի ամենաբարձր քաղաքացիական պարգեւով՝ «Պատվո շքանշանով»:

Անվանի բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը ներկաների հետ կիսվեց՝ Միքայել Ախտյան ստեղծագործողից ստացած անձնական տպավորություններով, պատմեց մանրամասներ՝ իր կողմից՝ հոգու թելադրանքով կատարված, նրա ստեղծագործությունների վրացերեն թարգմանությունների մասին: Միքայել Ախտյանի ու նրա ավանդական ընտանիքի մասին հետաքրքիր հուշերով հանդես եկավ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը:

Ելույթ ունեցան նաեւ արձակագիր Ռաֆայել Հրաչյան, Լուսինե Վանոյանը, Միխայիլ եւ Աննա Անանովները, վաստակաշատ մանկավարժ Ռոզա Զոհրաբյանը:

Միքայել Ախտյանը վախճանվել է 2016թ., Թբիլիսիում: Նրա աճյունը ամփոփված է Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների «Խոջիվանքի» պանթեոնում:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐ

ՁԵՎԱՎՈՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՓՈՍՏԻ ԵՎ TBC ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ

Այսուհետեւ Թբիլիսիի փոստի սպառողները, Վրաստանի մասշտաբով, բոլոր երկրամասերում, որտեղ փոստը գործում է, կկարողանան լիարժեք ստանալ TBC բանկի կողմից առաջարկած սպասարկումները:

Համագործակցության շրջանակներում՝ Վրաստանի փոստի սպառողներին հնարավորություն կտրվի ուղարկել կամ ստանալ առաքումները եւ միաժամանակ օգտվել TBC բանկի եւ TBC ապահովագրական սպասարկումների ողջ ցուցակից: Նաեւ՝ Վրաստանի փոստի սպասարկման կենտրոններում իրականացնել իրենց համար ցանկալի ֆինանսական գործողությունները: Համագործակցության նպատակը սպառողների համար ժամանակի տնտեսումն է եւ փոստային ու բանկային սպասարկումների մատչելիության ավելացումը: Սկզբնական փուլում բանկային սպասարկումները մատչելի կլինեն Վրաստանի փոստի մի շարք սպասարկման կենտրոններում, իսկ 2019 թվականի նորամուծությունն աստիճանաբար կներդրվի Վրաստանի մասշտաբով գործող փոստային բոլոր սպասարկման կենտրոններում:

- Բանկային հատվածի հետ համագործակցության մեր որոշումը պայմանավորված էր ընկերության սպասարկումների՝ սպառողներին կողմնորոշված քաղաքականությամբ: Դրանում նկատի է առնվել այլ երկրներում լայն տարածում գտած փոստային գործունեության պրակտիկան: Գտնում եմ, որ համագործակցությունը կլինի բազմակողմանի, չի սահմանափակվի միայն փոստային եւ ֆինանսական սպասարկումներով: Երկրում երկու առաջատար խոշոր ներկայացուցիչների փորձի փոխանակումը կնպաստի նորամուծությունների ներդրմանը: TBC բանկի թիմն աչքի է ընկնում նոր տեխնոլոգիաների վրա հիմնված հետաքրքիր մոտեցմամբ, իսկ Վրաստանի փոստի առաջիկա ծրագրերը անմջականորեն առնչվում են տեխնոլոգիական նորամուծությունների հետ,- հայտարարեց Վրաստանի փոստի գլխավոր տնօրեն Լեւան Չիկվաիձեն:

- Ուրախ ենք, որ համագործակցություն ենք սկսել ազգային փոստային առաջատար լիդեր Վրաստանի փոստի հետ, որը սպառողներին սպասարկումներ է մատուցում Վրաստանի ողջ մասշտաբով: Մեր երկու ընկերություններն ընդհանուր շատ բան ունեն՝ երկուսս էլ կողմնորոշված ենք զարգացման, սպառողների համար հարմարավետ միջավայրի ստեղծման եւ սպառողների պահանջներին ու շահերին համապատասխան նոր սպասարկումների ու ծառայությունների առաջարկման կողմը: Հետեւաբար, համոզված եմ, որ այս համագործակցությունը կլինի արդյունավետ եւ Վրաստանի փոստն ու TBC բանկը սպառողներին կառաջարկեն հետաքրքիր նորարարական նախագծեր,- նշեց TBC բանկի գլխավոր տնօրեն Վախթանգ Բուցխրիկիձեն:

Վրաստանի փոստը երկրի խոշորագույն փոստային կազմակերպությունն է, որը աչքի է ընկնում ինչպես սպասարկման մեծ տեսականիով, այնպես էլ՝ սերվիս սպասարկման կենտրոնների ամենալայն ցանցով: Վրաստանի փոստը երկրի ողջ մասշտաբով ներկայացված է 82 սպասարկման կենտրոններով: Ընկերության նպատակն է՝ Վրաստանի բոլոր քաղաքացիների համար մատչելի դարձնել մատուցվող սպասարկումները, պաշտպանել եւ ապահովել նրանց իրավունքները, որպեսզի նրանք անխափան կարողանան ստանալ փոստային սպասարկումներ՝ երկրի ցանկացած վայրում:

TBC բանկը, հաշվի առնելով բոլոր հանգուցային չափորոշիչները, Վրաստանի առաջին բանկն է: Հանրապետության բանկին միանալուց հետո, 2018 թվականի հունիսի 30-ի դրությամբ, TBC բանկի բանկային ողջ ակտիվները կազմում են 37,1 տոկոս, վարկային պորտֆելը՝ 38,3 տոկոս, իսկ դեպոզիտային պորտֆելը՝ 39,5 տոկոս: TBC բանկը սպասարկում է անհատական միկրո, փոքր, միջին եւ կորպորատիվ սեգմենտների ու 2,3 միլիոնից ավելի սպառողների: TBC բանկը Վրաստանի մասշտաբով ունի 7200 աշխատակից, իսկ երկրի մասշտաբով գործում է բանկի 152 մասնաճյուղ:

Նշենք, որ TBC բանկի բաժնեթղթերը 2014 թվականից սկսել են վաճառվել Լոնդոնի ֆոնդային բորսայում:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՆ Է

ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ, ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՎՈՐՈՂ ՆԱԽԱԳԱՀ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԿԴԱՌՆԱ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎՍ ՄԵԿ ԵՐԱՇԽԻՔԸ»

Ելույթ ունենալով Մարզապալատում անցկացված հանդիպմանը՝ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ Սալոմե Զուրաբիշվիլին կդառնա եւս մեկ երաշխիք Վրաստանի եվրաինտեգրման ճանապարհին: Նշելով, որ եվրաինտեգրման քաղաքականությունը լրիվությամբ համապատասխանում է երկրի բնակչության պատմական կամքին, վարչապետը նշեց. «Հենց այդ կուրսի պաշտպանությամբ էլ հանդես կգա նախագահության՝ մեր կողմից աջակցվող թեկնածուն՝ տիկին Սալոմեն: Նա, չնայած առանձին քաղաքական ուժերի կողմից իրականացված ապակայունացման եւ վիրավորական ելույթների, շարունակում էր եվրոպական տիպի իր նախընտրական քարոզարշավը»,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանին անհրաժեշտ է եվրոպական տիպի անկուսակցական հանրությունը միավորող նախագահ:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ԹՈՒՅԼ ՏՂԱՄԱՐԴԻԿ՝ ՈՒԺԵՂ ԿՆՈՋ ԴԵՄ»

Ելույթ ունենալով Մարզապալատում՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, բնութագրելով անցած քարոզարշավը, նշեց, որ այն կարելի է անվանել՝ «Թույլ տղամարդիկ՝ ուժեղ կնոջ դեմ»: Նրա խոսքով, «Վրացական երազանքի» կողմից աջակցող թեկնածու Սալոմե Զուրաբիշվիլին, հենց սկզբից իր մրցակիցներին կոչ արեց անցկացնել արժանի եվրոպական նախագահական քարոզարշավ, թեպետ պատասխանը ո՛չ եվրոպական էր եւ ո՛չ էլ վրացական: «Անցած երկու ամիսների ընթացքում՝ մենք տեսանք անարժան վերաբերմունք, ագրեսիա եւ ատելություն՝ ընդդիմադիրների կողմից: Միայն ուժեղ կինը կարող էր համբերությամբ պատասխանել ընդդիմախոսների բարոյական թուլությանը»,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ԿԱԽԻ ԿԱԼԱՁԵ. «ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԿԴԱՌՆԱ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ»

Թբիլիսիի Մարզապալատում կայացած հանդիպմանը, իր խոսքում մայրաքաղաքի քաղաքապետ Կախի Կալաձեն հայտարարեց, որ կուսակցությունը պաշտպանում է այն թեկնածուին, որը կդառնա ոչ թե ինչ-որ կոնկրետ քաղաքական կուսակցության, այլ ողջ երկրի հանրության շահերի արտահայտիչը: Կախի Կալաձեի համոզմամբ՝ Զուրաբիշվիլին կդառնա օրինակելի նախագահ ոչ միայն տարածաշրջանում, այլեւ նշանակալի ավանդ կներդնի նաեւ եվրոպական քաղաքականության մեջ, դրական դեր կկատարի Ռուսաստանի հետ հարաբերություններում: Նա կլինի ժողովրդական նախագահ, միջնորդ՝ քաղաքական սուբյեկտների միջեւ:

ԹԵՅՄՈՒՐԱԶ ԳՈՐՋԵՍՏԱՆ. «ՄԱՅՐԻԿԻՄ՝ ՍԱԼՈՄԵԻ, ՀԱՅՐԻԿԻՍ, ՏԱՏԻԿԻՍ ՈՒ ՊԱՊԻԿԻՍ ՎԱՍՏԱԿՆ Է, ՈՐ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ ԴԱՐՁԱՎ ՎՐԱՑԵՐԵՆԸ»

«Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել աջակցության համար: Քեթեւանը եւ ես Փարիզից եւ Լոնդոնից ժամանել ենք այս շաբաթ, քանի որ սա մեզ համար յուրահատուկ պահ է: Թեկնածուն, որին դիմում եք՝ տիկին Սալոմե, որը կիրակի հավանաբար կդառնա նախագահ, մեզ համար կմնա ուղղակի մայր: Այս դիմելաձեւը - «մայր», մեզ համար խորհրդանշական է, քանի որ այս բառը մեզ համար առաջին բնազդային կապն էր հեռավոր Վրաստանի հետ: Սա հնարավորության արդյունք չէ, սա արդյունք է մեր ծնողների, տատիս ու պապիս վաստակը, որ մեր մայրենին դառնար վրացերենը եւ դարձավ»,- հայտարարել է Թեյմուրազ Գորջեստանը:

Քեթեւան եւ Թեյմուրազ Գորջեստանները

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԲԻԶԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԿՈՉՎԻ ԻՐ ԱՆՈՒՆՈՎ»

Նախագահական ընտրություններից հինգ օր շուտ՝ Վրաստանի նախկին վարչապետ, կառավարող «Վրացական երազանք» կուսակցության նախագահ եւ երկրի ամենաազդեցիկ անձնավորություն Բիձինա Իվանիշվիլին՝ հեռուստաթերթերով հարցազրույց տվեց մի շարք հեռուստաընկերությունների թղթակիցներին:

Հատկանշական է, որ, Բիձինա Իվանիշվիլին, ինքն էր կանխագծել հարցազրույցի ձեւաչափը, ինքն էր ընտրել հեռուստաընկերություններն ու լրագրողներին: Հարցազրույցն անցկացվեց անմիջականորեն նրա անձնական նախաձեռնությամբ: Նշենք նաեւ, որ սկզբում Իվանիշվիլին հրավիրել էր այլ լրագրողների, թեպետ նրանք հրաժարվեցին մասնակցել: Ի վերջո, միջոցառմանը մասնակցության ցանկություն հայտնեցին երեք հեռուստաընկերությունների քաղաքական հաղորդումների ներկայացուցիչներ՝ էկա Կվեսիտաձեն («Ռուսթավի-2»), Դիանա Տրապաիձեն (ՏՎ առաջին) եւ Իրակլի Չիխլաձեն («Իմեդի»):

Ստորեւ ներկայացնում ենք գրեթե երկու ժամ տեւողությամբ հարցազրույցի հակիրճ բովանդակությունը:

ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՂԱՎԱՂՈՒՄ Է ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հոկտեմբերի 24-ին տված հարցազրույցում նախկին վարչապետը նշեց, որ, տնտեսական աճի տեսանկյունից, Վրաստանը տարածաշրջանում առաջատարներից մեկն է, սակայն բնակչությունն այդ չի նկատում, քանի որ «Ռուսթավի-2»-ը միշտ դրա հակառակն է ապացուցում: Բիձինա Իվանիշվիլու խոսքով, «Ռուսթավի-2»-ը հասարակության մի մասին պատանդ է պահում եւ գցում թյուրիմացության մեջ, թեպետ դա մոտ ժամանակներս իր վերջը կունենա: «Նաեւ խոստանում ենք, որ «Ռուսթավի-2»-ը չի ունենա՝ հեռուստաթերթերով այլ կարծիքի տարածումը կանխելու, հասարակությունը շրջափակելու ու պատանդ պահելու հնարավորություն»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

ՏՆԵՐՆ ԱՅՆՔԱՆ ԷԼ ՊԵՐՃԱՇՈՒՔ ՉԵՆ

Լրագրողի հարցին, թե Բիձինա Իվանիշվիլին ի՞նչ կարծիքի է լրատվամիջոցներով տարածված այն տեղեկատվության վերաբերյալ, որը վերաբերում է նախարարների եւ խորհրդարանականների անշարժ գույքին, ի պատասխան՝ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ դա «Ռուսթավի-2»-ի կողմից տարածած հերթական հերյուրանքն է: Նրա խոսքով, «Ռուսթավի-2»-ի կողմից նկարահանած տները, որոնք այնքան էլ պերճաշուք չեն, վերջին տարիներին իշխանության ներկայացուցիչների կողմից չի կառուցվել: Եվ, ընդհանրապես, այդ հողատարածքներն էլ իշխանության ներկայացուցիչներին չեն պատկանում:

Ի՞ՆՉ ԿԱՊ ԿԱ ԽՈՐԱՎԱՅԻ ՄԻՋԱԴԵՊԻ ԵՎ ԳԻՐԳՎԼԻԱՆՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Անդրադառնալով այդ թեմային՝ Բիձինա Իվանիշվիլին ասաց, որ Խորավայի փողոցում երկու անչափահասների սպանության գործը «ողջ երկրի ողբերգությունն է», թեպետ այդ հանցագործության մեջ պետության հետքը բացառվում է: Նախկին վարչապետը համաձայն չէ որդեկորույս հոր՝ Զազա Սարալիձեի կողմից առաջադրված մեղադրանքներին, իբր բարձրաստիճանավորները հովանավորում են մարդասպաններին: Բիձինա Իվանիշվիլին ընդգծեց, որ հարկ է՝ սպասել դատարանի որոշմանը: Ըստ նախկին վարչապետի՝ Խորավայի գործի համեմատումը Գիրգվլիանու սպանության հետ, ցինիզմ է, քանի որ Գիրգվլիանու դեպքում, սպանությունը իրականացվել էր պաշտոնյաների կողմից: Իվանիշվիլին, որպես «բարձր չափորոշիչ», անվանեց Խորավայի գործով նախկին գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի պաշտոնաթողության փաստը: Թեպետ, Բիձինա Իվանիշվիլու համոզմամբ, այդ գործում Շոթաձեն ոչ մի մեղք չուներ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՀԱՄԱԿՈՒՍԱԿԻՑՆԵՐԻՆ

Համակուսակիցների մասին խոսելիս՝ Բիձինա Իվանիշվիլու բավական խիստ տոնը ցույց է տալիս, որ նա դժգոհ է կառավարող թիմի գործունեությունից: Նա հասարակությունից մեկամյա ժամկետ խնդրեց, խոստանալով, որ այդ ժամանակահատվածում թիմը «է՛լ ավելի կուժեղանա» եւ մեկ տարվա ընթացքում «ամեն ինչ իր անունով կկոչվի»: «Ես կկարողանամ թիմում անցկացնել ուղղահայացը: Շնորհալիները դուրս կգան առաջին պլան եւ կդառնան ավելի ակտիվ: Կխստացվեն պահանջները «Վրացական երազանքի» բոլոր անդամների նկատմամբ»,- ընդգծեց կուսակցության նախագահը:

ՍԱԼՈՄԵՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ Է

Իր հարցազրույցում Բիձինա Իվանիշվիլին բավական ժամանակ տրամադրեց՝ կառավարող թիմի կողմից աջակցության արժանացած՝ Սալոմե Զուրաբիշվիլու թեկնածությանը, նրան անվանելով ամենաարժանավոր թեկնածուն: Նրա համոզմամբ, Սալոմե Զուրաբիշվիլու աջակցության որոշումը ճիշտ էր եւ դրանում համոզվեցին նաեւ «Վրացական երազանքի» այն անդամները, ովքեր սկզբում դրան դեմ էին: Թեպետ, միաժամանակ, խոստովանեց, որ թիմում դեռեւս կան մարդիկ, ում Զուրաբիշվիլին դուր չի գալիս: «Առանձին անդամների հիշեցրի, որ պետք չէ կոտրատվել եւ պետք է հարգանքով վերաբերվել կուսակցության դիրքորոշմանը»,- նշեց Բիձինա Իվանիշվիլին, թեպետ խուսափեց կոնկրետացումից:

ՄԱՐԻԽՈՒԱՆԱՆ՝ ՄԻԱՅՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՍՄԵՏԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Հոկտեմբերի 24-ին տված հարցազրույցում, Բիձինա Իվանիշվիլին անդրադարձավ լայն արձագանք առաջացրած մարիխուանայի թեմային, նշելով, որ անձամբ մասնակցել է բժշկության եւ կոսմետիկայի համար մարիխուանայի արտադրության հարցի քննարկումներին, եւ այդ գաղափարն իր կողմից է առաջադրվել: Նրա համոզմամբ, չնայած լայն արձագանքների, թեմայի քննարկումը դեռեւս չի ավարտվել, այն շարունակվելու է:

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ԿԱՐԳԱՎՈՐԵՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բիձինա Իվանիշվիլու համոզմամբ՝ առանց նախկին իշխանության անշրջահայաց ու «դավաճան գործունեության», Ռուսաստանը չէր կարողանա իրականացնել՝ 2008 թվականի օգոստոսին վրացական տարածքների բռնազավթումը:

Իվանիշվիլու խոսքով, «պետք է փորձենք առավելագույնս կարգավորել Ռուսաստանի հետ հարաբերությունները, սակայն ոչ մեր երկրի տարածքային ամբողջականության հաշվին»:

Խոսելով երկրի արտաքին քաղաքական կուրսի մասին՝ Իվանիշվիլին նշեց, որ Վրաստանը միաժամանակ մնալով ԱՄՆ-ի գործընկերը, կարողանում է՝ կանխել Ռուսաստանի կողմից իրավիճակի սրման փորձերը: Բիձինա Իվանիշվիլու համոզմամբ՝ Վրաստանը երբեք ԱՄՆ-ի հետ չի ունեցել նման մոտ հարաբերություններ: Միաժամանակ, նա հպարտությամբ նշեց, որ Վրաստանը հավասարակշռված քաղաքականություն է իրականացնում հարեւան երկրների հետ:

ԵՍ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆ ԵՄ

Բիձինա Իվանիշվիլին գտնում է, որ երկրում ոչ մի անօրինական կառավարում գոյություն չունի եւ, նրա համոզմամբ, դա հորինել են լրագրողներն ու ոչ կառավարական կազմակերպությունները:

Չնայած նրան, որ արդեն վեց տարի է, ինչ երկրում բարձր պաշտոնատար անձանց նշանակման ու ազատման հարցերը, ինչպես նաեւ՝ մյուս նշանակալից կամ աննշան նախաձեռնությունները կարգավորվում են Բիձինա Իվանիշվիլու առանձնասենյակում, նա իրեն երկրի ձեւական ղեկավար չի համարում: Այդ մասին անմիջականորեն նշում են ինչպես թիմի անդամները, այնպես էլ՝ Բիձինա Իվանիշվիլին անձամբ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԻՋԵ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՄՆ-Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՆՔԵՐԻՆ

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՋՈՆ ԲՈԼԹՈՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 25-ին տարածաշրջանային այցով Հարավային Կովկասում գտնվող ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը գտնվում էր Երեւանում: Սա վերջին շրջանում ամերիկյան ամենաբարձր մակարդակի պատվիրակության այցն էր Հայաստան:

Երեւանում Բոլթոնը հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի, պաշտպանության նախարարի պաշտոնակատար Դավիթ Տոնոյանի եւ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանի հետ:

Հանդիպումներին քննարկվել են հայ-ամերիկյան երկկողմ հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը վերաբերող հարցեր: Բոլթոնը Փաշինյանին հայտնեց, որ ԱՄՆ-ն աջակցում է նոր կառավարության ջանքերին՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, դատական համակարգի թափանցիկության աստիճանի բարձրացմանը եւ քաղաքացիների առաջ կառավարության հաշվետվողականության մեծացմանը: Անդրադարձ կատարվեց նաեւ արցախյան հակամարտության կարգավորման գործընթացին: Բոլթոնը նշեց, որ «այն բխում է ոչ միայն Հայաստանի եւ Ադրբեջանի, այլ նաեւ Միացյալ Նահանգների շահերից»: «Եթե կանխատեսումներն իրականություն դառնան, ընտրություններից հետո վարչապետը կունենա շատ ուժեղ մանդատ մի շարք վճռական փոփոխություններ իրականացնելու համար»,- նշեց Բոլթոնը եւ հավելեց, որ պատրաստակամության պարագայում, պետք է աշխատել,որպեսզի Ադրբեջանի կողմից նույն արձագանքը լինի:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳՈՒՅՑ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոկտեմբերի 23-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը աշխատանքային հանդիպում է ունեցել Ժնեւում սինգապուրյան խոշորագույն «Vertex Venture Holdings» վենչուրային ընկերության, շվեյցարական «Swiss Sustainable Finance», գերմանական հանրահայտ «Siemens» ընկերությունների խմբի մեջ մտնող «Siemens Financial Services» կազմակերպության ղեկավարության հետ:

Հանդիպման նպատակը արտերկրի գործարարներին Հայաստանի ներդրումային դաշտին, տարբեր ոլորտներում համագործակցության ծավալման հեռանկարներին ծանոթացնելն էր:

Քննարկվել են նշված ընկերությունների հետ փոխշահավետ համագործակցությանը վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել նրանց փորձը մեր երկրում ներդնելու, ինչպես նաեւ՝ հայաստանյան ընկերությունների հետ նախագծեր իրականացնելու հնարավորություններին:

Ներկայացնելով Հայաստանի տնտեսության առավել արագ զարգացող եւ հեռանկարային ուղղությունները՝ Արմեն Սարգսյանը նշեց նաեւ, որ Հայաստանը, հանդիսանալով ԵԱՏՄ անդամ, կարող է կարեւոր հանգույց հանդիսանալ ԵՄ-ԵԱՏՄ անդամ երկրների միջեւ, հատկապես, որ դրա համար առկա են բոլոր պայմանները:

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՇԱԲԱԹ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 22-ին, Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը մասնակցեց Երեւանում «Եվրասիական շաբաթ» միջազգային ցուցահանդեսային համաժողովի բացմանը:

Ողջունելով «Եվրասիական շաբաթ» 3-րդ ֆորումի մասնակիցներին՝ Նիկոլ Փաշինյանը կարեւորեց Երեւանում դրա անցկացումը:

Նիկոլ Փաշինյանը շրջայց է կատարել նաեւ ցուցահանդեսի տաղավարներով, ծանոթացել ներկայացված արտադրանքին, մասնակից ընկերությունների գործունեությանը, նորարարական ներուժին եւ զարգացման ծրագրերին:

«Եվրասիական շաբաթ» միջազգային ցուցահանդեսային համաժողովը կազմակերպվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ, ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության եւ «Բիզնես Արմենիա» հիմնադրամի աջակցությամբ: Ֆորումին մասնակցում է ԵԱՏՄ-ից շուրջ 2500 եւ երրորդ երկրներից՝ շուրջ 250 ընկերություն: Իսկ ցուցահանդեսում ներկայացված է լինելու ԵԱՏՄ երկրների՝ արտահանող եւ արտահանման ներուժ ունեցող ընկերությունների արտադրանքը՝ գյուղմթերքի վերամշակման, սննդարդյունաբերության, թեթեւ արդյունաբերության, դեղագործական, շինանյութերի արտադրության, ոսկեգործության եւ այլ ոլորտներից:

ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ ԴԻՐՔԵՐԸ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ ԵՆ

Համաշխարհային տնտեսական համաժողովի (WEF) կողմից հրապարակված Համաշխարհային մրցունակության (Global Competitiveness Index, Armenia) 2018թ.-ի վարկանիշային աղյուսակում Հայաստանն աշխարհի 140 երկրների շարքում զբաղեցրել է 70-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ իր դիրքը բարելավելով 2 կետով:

Մրցունակության աղյուսակը 85.6 միավորով գլխավորում է ԱՄՆ-ն, որին հաջորդում են Սինգապուրը՝ 83.5 միավոր եւ Գերմանիան՝ 82.8 միավոր, 4-րդ հորիզոնականը զբաղեցնում է Շվեյցարիան՝ 82.6, 5-րդը՝ Ճապոնիան՝ 82.5 միավոր:

Չնայած այն հանգամանքին, որ Մրցունակության համաշխարհային ինդեքսում Հայաստանն այս տարի բարելավել է դիրքերը, այդուամենայնիվ դեռ շարունակում է հետ մնալ տարածաշրջանի երկրներից: Մասնավորապես, Ադրբեջանը աղյուսակում զբաղեցնում է 69-րդ տեղը, իսկ Վրաստանը 66-րդ տեղը: Տարածաշրջանի նշված երկու երկրները հետընթաց են գրանցել նախորդ տարվա համեմատ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԱՌԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ 61 ԵՐԿԻՐ

Միջազգային Henley & Partners խորհրդատվական ընկերությունը ներկայացրել է 2018թ. 4-րդ եռամսյակի համար անձնագրային ինդեքսի աղյուսակը, որի հիմքում առանց մուտքի արտոնագրի ճանապարհորդելու հնարավորությունն է:

Նոր աղյուսակի տվյալների համաձայն, Հայաստանը 80-րդ հորիզոնականում է: Հայաստանի քաղաքացիներն առանց մուտքի արտոնագրի կարող են այցելել 61 երկիր:

Ցանկի առաջին հորիզոնականում Ճապոնիան է, որի քաղաքացիները կարող են այցելել 190 երկիր: Առաջատար հորիզոնականներում ընդգրկվել են նաեւ Սինգապուրը (189), Հարավային Կորեան, Գերմանիան, Ֆրանսիան (188), Դանիան, Ֆինլանդիան, Իտալիան, Շվեդիան, Իսպանիան (187), Նորվեգիան, Բրիտանիան, Ավստրիան, Լյուքսեմբուրգը, Նիդերլանդները, Պորտուգալիան, ԱՄՆ-ը (186):

Հայաստանի հարեւան պետություններից Վրաստանը 50-րդ հորիզոնականում է (112 երկիր), Թուրքիան՝ 51-րդ (111 երկիր), Ադրբեջանը 75-րդն է (66 երկիր):

Աղյուսակի վերջին հորիզոնականներում Պակիստանը, Սոմալին, Սիրիան, Իրաքը, Աֆղանստանն են:

ԿԱՅՑԱԾԱՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հոկտեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում հանդիպում ունեցավ Հռոմի պապի՝ Ֆրանցիսկոսի հետ: Հիշեցնենք, որ Վեհափառը, հոկտեմբերի 23-ին, շքախմբի ուղեկցությամբ, Միլանիս մեկնեց Հռոմ: Նորին Սրբությանն ուղեկցում էին Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, գավազանակիր Հոգեշնորհ Տ. Անանիա աբեղա Ծատուրյանը եւ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը:

ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՊ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի վարչապետի ժամանակավոր պաշտոնակատարի ու Ադրբեջանի նախագահի միջեւ օպերատիվ կապ է ստեղծվել: Հայտարարելով այդ մասին՝ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց. «Ադրբեջանական կողմի հետ, ինչպեսեւ պայմանավորվել ենք, հաստատվել է հուսալի օպերատիվ կապ, եւ կարող ենք ասել, որ փոխադարձաբար ցանկացած տեղեկատվություն կես ժամվա ընթացքում կհասնի Ադրբեջանի նախագահին եւ, եթե իրենց կողմից լինի՝ ինչ: Այնպես չէ, որ հրադադարի ամեն խախտման դեպքում կապի մեջ ենք մտնում, ըստ անհրաժեշտության»,- ասաց Փաշինյանը:

Նա նշեց, որ սահմանին իրավիճակն անախադեպ հանգիստ է, ինչը կարելի է կապել՝ Դուշանբեում Հայաստանի ու Ադրբեջանի առաջնորդների միջեւ ձեռք բերված պայմանավորվածության հետ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՒՄ Է 100 ՏԱՐԻՆ ԼՐԱՑԱԾ 67 ՄԱՐԴ

Հայաստանում բնակվում է 100 տարին լրացած 67 տարեց: Նրանցից ամենատարեցը 113 տարին լրացած տատիկ է, ով բնակվում է Եղեգնաձորում: Երկրորդ եւ երրորդ տեղում կրկին կանայք են, որոնցից մեկը՝ 111, մյուսը 110 տարեկան է: Նախորդ տարի 100 տարին լրացած տարեցների թիվն ավելի շատ էր:

Հայաստանում 90 տարին լրացած տարեցների թիվը կազմում է 7 հազար 210: Այսօր գործում է 12 խնամքի հաստատություն, որից 5-ը՝ պետական, 7-ը՝ ոչ պետական: Բոլոր հաստատություններում ապրում է 1240 մարդ:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է 6,5 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

2018 թվականի հունվար-սեպտեմբերին Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 6,5 տոկոս:

Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, հունվար-սեպտեմբեր ամիսներին, բացի գյուղատնտեսության ոլորտից, որի համախառն արտադրանքի ծավալը նվազել է 4,8 տոկոսով, մնացած բոլոր ճյուղերի գծով աճ է գրանցվել: Արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 4 տոկոսով, շինարարության ծավալը՝ 7,6 տոկոսով, ծառայությունների ծավալը՝ 19,1 տոկոսով: Նշված ցուցանիշները, նախորդ ամսվա համեմատ, նույնպես աճ են գրանցել, բացառությամբ էլեկտրաէներգիայի արտադրության:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«ԹԲԻԼԻՍԻՆ՝ ԻՄ ՓՈՔՐԻԿ ՓԱՐԻԶ»-Ը ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 25-ին, Երեւանի Սարգիս Մուրադյան պատկերասրահում, տեղի ունեցավ վրացահայ նկարիչ Թենգիզ Միկոյանցի «Թբիլիսի՝ իմ փոքրիկ Փարիզ» խորագրով անհատական ցուցահանդեսը:

Ինչպես հաղորդում է «Ալիք մեդիայի» թղթակից Աննա Թանդարյանը, ցուցահանդեսին ներկա էին Հայաստանի մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, հյուրեր Վրաստանից, երեւանցիներ:

- Սա իմ քաղաքն է: Ես ցանկացել եմ իմ քաղաքը գեղեցիկ ներկայացնել,- ասաց Թենգիզ Միկոյանցը եւ հավելեց, որ ուրախանում է, երբ մարդիկ գնահատում են իր աշխատանքը, ինքն էլ փորձում է մարդկանց վառ եւ հաճելի տեսարաններ ներկայացնել:

- Մի քանի րոպեով տեղափոխվեցի հայրենի քաղաք: Թբիլիսիի ջերմությունը, հոգին ու կոլորիտն է այսօր այս պատկերասրահում ներկայացված: Ուրախ ենք նաեւ, որ Երեւանի բնակիչներին տրվել է այսպիսի հնարավորություն՝ վայելելու այս պատկերները: Համոզված եմ՝ նրանցից շատերի համար ծանոթ տեսարաններ են. շատ էմոցիա կա սրանցում, շատ հիշողություններ, մանկության պատկերներ,- ասաց Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն

- Վառ է, հետաքրքիր եւ կոլորիտային»,- նշեց Հայաստանի մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը՝ հավելելով, թե «ով գոնե մեկ անգամ եղել է Թբիլիսիում եւ զգացել է քաղաքի գունագեղ, ջերմ կոլորիտը, կհասկանա, թե ես ինչ եմ զգում, երբ նայում եմ նկարներին:

Ինչպես հայտնեց մշակույթի նախարարը, այս տարի Թբիլիսիում ծրագրվում է անցկացնել «Հայաստանի մշակութային օրեր Վրաստանում»: Իսկ մյուս տարվա հետ կապված արդեն իսկ ծրագրվում են միջոցառումներ՝ Թումանյանի 150-ամյակին նվիրված:

Նշենք, որ պատկերասրահի կողմից վերականգնվող հայ-վրացական մշակութային կապերի երկրորդ ցուցադրությունն է: Ամիսներ առաջ տեղի է ունեցել վրաց գեղանկարչուհի Ցիռա Կալանդաձեի ապլիկացիոն աշխատանքների ցուցահանդեսը:

ԱՆՆԱ ԹԱՆԴԱՐՅԱՆ

Երեւան, հատուկ «Վրաստանի» համար

ԿՐԹՕՋԱԽ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՅԱՆՔ: ԱՅՈ, ՈՒՐԵՄՆ ԴՊՐՈՅԱԿԱՆ ԵՆՔ ԱՐԴԵՆ

Մեծ էր միջոցառման խորհուրդը. Թբիլիսիի թիվ 104 հանրային հայկական դպրոցում, հոկտեմբերի 25-ին, նշվեց դպրոցական դառնալու օրը: Դպրոցի 17 առաջին դասարանցիներ հրաժեշտ տվեցին իրենց առաջին դասագրքին՝ պատկերազարդ «Այբբենարանին» եւ թեւակոխեցին ուսուցման նոր փուլ:

Շնորհիվ Էմմա Ագուլյանի՝ սիրված ուսուցչուհու, լավագույն դասվարի, իր առաքելությանը նվիրված մանկավարժի, օրվա հերոսները հավաքվածներին ներկայացրեցին համահունչ բեմադրություն. երգեցին, արտասանեցին, պարեցին ոչ միայն մայրենի, այլ նաեւ՝վրացերեն ու անգլերեն լեզուներով: Չմոռացան իրենց խոնարհ շնորհակալությունը բերել՝ հայ տառերն ստեղծող Մեծն Մեսրոպ Մաշտոցին: Ապա, տոնական ու հանդիսավոր մթնոլորտում, ստացան «Հավաստագիր», որով դարձան Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի աշակերտներ:

Ուսման նոր շեմ անցնող առաջին դասարանցիներին ուսման հաջողություն եւ կանքի բարի երթ մաղթեց դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը: Միջոցառմանը ելույթ ունեցան Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, մամլո քարտուղար Հարություն Հայրապետյանը, խորհրդական Արտակ Գրաբսկին, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, Թբիլիսիի «Հայարտուն» մշակութային կենտրոնի ղեկավար կենտրոնի Եվգենյա Մարկոսյանը:

Առաջին դասարանցիների համար առաջին «դպրոցական» միջոցառմանը մասնակցեցին նաեւ մանուկների ծնողները:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍՊՈՐՏ

ՆՈՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ԽԱՂԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց երկրների ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը:

Վարկանիշային նոր սանդղակում, Ազգերի լիգայի մրցաշարում, հաջողությամբ հանդես եկող Վրաստանի հավաքականը, նախորդի համեմատությամբ, առաջադիմել է մեկ սանդղակով եւ ներկայումս հանգրվանել է 92-րդ տեղում: Իսկ Հայաստանի թիմը: Ազգերի լիգայում իր անշուք խաղի արդյունքում, նահանջել է մեկ հորիզոնականով եւ ներկայումս զբաղեցնում է 101-րդ տեղը:

Վարկանիշային նոր աղյուսակը գլխավորում է Բելգիայի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցնում են Ֆրանսիայի եւ Բրազիլիայի ընտրանիները: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցնում նաեւ Խորվաթիայի, Անգլիայի, Ուրուգվայի, Պորտուգալիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի եւ Դանիայի հավաքականները:

ԸՄԲՇԱՄԱՐՏ. ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Բուդապեշտում անցկացվեց ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնության մրցաշարը: Մինչեւ 125 կգ քաշային կարգում վրաց մարզիկ Գենո Պետրիաշվիլին նվաճեց աշխարհի ուժեղագույնի կոչումը: 74 կգ քաշային կարգում Ավթանդիլ Կենչաճեն զբաղեցրեց երկրորդ տեղը, իսկ Զուրաբ Իակոբաշվիլին (74 կգ) եւ էլիզբար Օդինաճեն (մինչեւ 97կգ) արժանացան բրոնզե մեդալների: Թիմային հաշվարկում վրաց մարզիկները զբաղեցրին երրորդ տեղը:

Ինչ վերաբերում է մրցաշարի հայաստանցի մասնակիցներին, ապա, նրանք անհաջող հանդես եկան եւ մնացին առանց պարգեւների:

Ներկայումս Բուդապեշտում մեկնարկել է հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնության մրցաշարը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Մեխանիկայի բաժին: 8.Մարզ ՌԴ-ում: 9.Փոքրիկ սրինգ: 10.Առողջարանային քաղաք Ղրիմում: 13.Աղանդեր: 18.Միջնադարյան բերդ, որը գտնվում էր Մեծ Հայքում: 19.Հրադատություն: 22.Քիմիական տարր: 23.Կենդանին՝ շունչը փչած: 28.Գերմանացի փիլիսոփա: 29.«Կնքահայր» վեպի հեղինակը՝ Մարիո ...: 32.Իսլամում թվաքանակով երկրորդ ամենամեծ դավանանքը: 33.Թատերագրական երկի կամ ներկայացման ամբողջական մաս: 34.Պարահանդեսային պար: 37.Կրակե: 39.Աշխարհի խոշորագույն թանգարաններից: 41.Զրարջ: 44.Այծի էգ ձագ (բրբ.): 46.Գրող ... Խանզադյան: 47.Կախովի լուսատու: 49.Մաշկի վրա ի ծնե գոյացած բիծ: 50.Իրանահայ բանաստեղծ Արշալույս (Արշի) ...: 52.ԱՄՆ Մոնտանա նահանգի վարչական միավորներից: 54.Շնորհք (բրբ.): 55.Իտալական ծագումով ֆրանսիացի մոդելյոր Նինա ...: 56.Վարչատարածքային միավոր Վալոնիայում (Բելգիա): 57.Պանրի ջուր: 58.Կեխտի հետք:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Թղթապանակ: 2.Վրացի դերասանուհի ... Քավժարաձե: 3.XIII դարում Վրաստանի թագավոր ... Գիորգի IV: 4.Պրինտեր: 5.Ֆրանսիացի գրող, սյուրռեալիզմի հիմնադիր ... Բրետոն: 6.Որովհետեւ, քանի որ: 11.Համակարգչային բաղադրիչներ արտադրող ընկերություն: 12.Թլիկ խոսող: 14.Կրծող՝ կաթնասունների ընտանիքից: 15.Խելագար: 16.Ըմպելիք, որը պատրաստվում է ջրից, մածունից եւ աղից: 17.Գլխի երկար մազ, ծամ: 20.Քիմիական տարր, ոչ մետաղ: 21.Կառույցի, առարկայի զարդարանքների համակարգ: 24.Գորշագույն-սպիտակ գույնի փափուկ մետաղ, կլայեկ: 25.Միացնել, ագուցել: 26.Ապառաժի ծայր, քարափ: 27.Նույնանուն քաղաքի վրա գտնվող պետություն Հյուսիսային Միջագետքում: 30.Չափազանց նիհար քոսոտ ձի: 31.Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության նախկին անվանումը: 35.Ռազմի աստվածը հին հունական դիցարանում: 36.Թռչուն: 37.Պտտվող խաղալիք: 38.Բախտավոր: 40.Ե'Վ Տերյան, ե'ւ Թոթովենց: 42.Հնդիկ քաղաքական գործիչ Ջավահարլալ ...: 43.Ճապոնական ավտոմեքենա: 44.Վախկոտ, երկչոտ: 45.Քինախնդիր: 48.Ամոթ: 51.Առյուծի վզի մազը: 52.Շլաչք: 53.Զերմ, եռման:

Կազմեց Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Մակարենա: 4.Մահուդ: 7.Վանուշ: 9.Մոնթե: 11.Սեն: 12.Մուրալ: 13.Տավիդ: 14.Սինդի: 17.Լաոս: 18.Ասուպ: 20.Արփա: 21.Մեղր: 22.Արա: 23.Դուբայ: 24.Չիլի: 25.Արին: 28.Սի: 29.Արամե: 30.Այրում: 32.Ադամ: 35.Կնքել: 37.Հոմերոս: 39.Կիսա: 41.Պրահա: 42.Սիմոն: 43.Սինա: 45.Մոնրո: 46.Կիվի: 47.Սամուրայ: 48.Սակե: 49.Շուշան: 50.Արագվի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մոմիկ: 2.Կենտ: 3.Ավետիս: 4.Մումիա: 5.Աշուղ: 6.Դալիլա: 8.Անա: 10.Ենիսեյ: 14.Սոմա: 15.Դարչին: 16.Արարատ: 17.Լպուտյան: 19.Ուելս: 20.Արար: 26.Իմ: 27.Նեմրութ: 29.Ամարաս: 31.Ուրեկի: 32.Ամպեր: 33.Դեր: 34.Մոհիկան: 35.Կարաս: 36.Լիմ: 37.Հանոյ: 38.Սանիկ: 40.Սոմալի: 42.Սամբա: 44.Ավետ: 48.Սան:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445